« նաւուճք իւրեն զեն չի կարեն հասուցանել։
« Ծովն մեծամեծ ձկունք կու լինին և ծո֊
« վային վիշապք. ուտէ, և զաւելին այլ
« պատառող թռչնոց և գազանացն կու թո֊
« ղու. զի իջանէ ի բարձանց ահագին գոչ֊
« մամբ, ըմբռնէ ժանեօքն և բարձրանայ,
« և տանի ի կղզին այն, և այնով կերակրի.
« զան այլ գազանքն և զմնացեալսն ուտեն.
« և ինքն ելեալ ի բարձր լերանց գլուխն՝
« և նոցա ուտելն հայի և սրտովն հեշտանայ։
« Եւ զարձեալ թռչի և թեւս արձակէ ու֊
« րախութեամբ, և որպէս զքամի որ դիպի
« ի ծառի միոյ՝ գոչէ ձայնիւ և շրջագայի ի
« վերայ ծովուն. և թէ տեսանէ նաւս որ
« կորուսեալ են զճանապարհսն իւրեանց,
« առաջնորդ լինի նոցա և ճանապարհ ցու֊
« ցանէ, վասն զի թէպէտ զօրաւոր է՝ այլ
« խնամածու է։

« Պատմութիւն. Ասեն, թէ օր մի նա֊
« ւորդք երթային ի վերայ ովկիանոս ծովուն
« մեծ նաւով և մոլորեցան զճանապարհն
« իւրեանց. տեսան ի հեռուստ որ ամպի
« նման իբր մի կու գայ. և նաւորդքն շուտով
« հասին ի ներքեւն նորա, և սկսան աղա֊
« ղակել և զԱստուած աղաչել. և տեսան որ
« թռչուն էր. և նա ճանապարհ եցոյց նոցա,
« և եհան զնոսա և առաջնորդեաց ի յեզերս
« ծովուն, և ապրեցան ամենեքեան շնորհօքն
« Քրիստոսի։ — Ասեն, թէ Սումուրկին
« կեանքն 1700 տարի կու լինի. 500 տա֊
« րուն յետեւ ձուս ածէ և ձագս հանէ. և
« այլ ասեն, թէ շատ աշխատութեամբ ձուս
« ածէ. և... ի վերայ ձվուն որձն կու նստի.
« և 125 տարին ապա ձագս հանէ, այն
« այլ մէկ ձագս լինի. թէ որձ լինի այն
« ձագն՝ որձն նստի և կերակրէ զնա, և
« այնչափ քովլին ի միմեանց՝ որ հուր ելանէ.
« և որձն հայի հեռեւանց, և նա այլ գայ
« միատեղ այրի. և թէ էգ ելանէ ձագն՝
« էգն քովլին միմեանց, որ նոցա այլ հուր
« ելանէ, և այրէ. և էգն այլ հայի հեռե֊
« ւանց, և գայ ի մօտ նորա և նա այլ այրի։
« Ցետոյ, թէ մնաց ձագն՝ գայ որձն և ճուղ֊
« տակ լինի»։ — Բարի տէրտէրն իր լաւծը
գրած է, առանց մեզի իմացընելու՝ թէ այդ֊
պէս ձագ և որձ կամ էգ այրուելով՝ ի՞նչպէս
մնան Սիմուրկք յ՚Ղօմէն կղզին. իսկ հե֊
ռեւանց նայելով ձագ ածողացն՝ հարկ էր որ
իրենք չըլլան քովողքն անոր հետ, այլ թե֊
րեւս ձագին երկու ոլորքն իրարու հետ.
վասն զի այսպիսի քովիլ մի յիշէ յառաջ
տեղ մի։ Եթէ այս առասպելահրաշ հաւուն
վրայօք արեւելեայց աւանդութեան աւելի
փափագող մ՚ըլլայ, կրնայ անոնց բառա֊
գրոց մէջ այլ քննել سيمرغ (Սիմուրղ) ա֊
նունը, որ և Աճգա عنقا կոչի յԱրաբաց։

Դ. Թռչնաբանութիւնն աւարտելով մեր
հեղինակն, « Այսմ հետէ ըսկիսըն արտա֊
« ցուք, կ՚ըսէ, ի ջրային կենդանեացն,
« զընութիւն, զօգուտն և զենն, և այլն
« ամենայն. Աստուածով։ — ա. Հայերէն
« խեցգետին, և ոմանք այլ խաչփառ ա֊
« սեն. Ար. Սարաբան, Թր. Էնկէճ, ոմանք
« (յոյնք) Պաղուրեայ այլ ասեն։ Հանց կեն֊
« դանի է որ գլուխ չունի. աչքն՝ ի թիկունքն
« է, բերանն՝ ի կուրծքն է. ութ ոտքի ունի.
« երկու մեծ ոտքի ունի՝ որ այնով կ՚ուտէ
« և այնով կու խածանէ, զի որպէս կարիճ
« խայթոց ունի. և երկու դիհն կու քալէ.
« տարին երկու անգամ զկէճէպն կու փոխէ.
« բունն երկու դռնէն կու շինէ, զի թէ յոր֊
« ժամ որ զկէճէպն կու փոխէ՝ թշնամիք
« շատ կու լինին, զի կ՚ուզեն որ ուտեն.
« երբ որ թշնամին ցամաք դիհէն կու գայ,
« կու փախչի՝ ի ջուրն կու մտանէ. և յոր֊
« ժամ ի ջրէն գայ՝ ի ցամաք կու փախչի,
« և այնպէս կու զերծանի։ Եւ կենայ մինչեւ
« որ կէճէպն թանձրանայ, և ապա ելանէ
« և շրջագայի։ — Օգուտն այս է, եթէ
« ծառի մի որ պտուղ չի բերէ՝ կախեն ի
« ծառէն, Աստուծով պտուղ բերէ. և թէ
« պտուղ բերէ՝ չի թափի։ Եւ թէ մարմինն
« մարդոյն փուշ կամ երկաթ մնայ, ծեծեն
« և ի վերայ դնեն, քաշէ զփուշն և զեր֊
« կաթն։ Եւ թէ օձ կամ կարիճ խածանէ
« զմարդն, ծըծեն և ի վերայ դնեն, ողջանայ
« Աստուծով», և այլն։ Որչափ համառօտ և
լաւ է խեցգետնի ստորագրութիւնն, նոյն֊
պէս անտարակոյս չեմք կրնար ըսել իր
օգուտներըն։

Ցետ խեցգետնի (բ) կարգած է «Հ. կրիայ.
« Թր. Քափլու պաղայ. Ծովային և ցամա֊